«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Հեքիաթի դերը անձի արժեքային համակարգի զարգացման գործընթացում**

-

ԱՌԱՐԿԱ **Հայոց լեզու ֆ գրականություն**

ՈՒՍՈՒՑԻՉ **Լիլիա Հարությունյան**

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ

-

Ներածություն ---------- 3

Գլուխ I, Հեքիաթի ուսումնասիրման առանձնահատկությունները ---------- 5

Գեղարվեստական ստեղծագործությունների տեսակները, կրթական փաստաթղթերով դրանց ուսումնասիրմանը ներկայացվող պահաջները

Հեքիաթը որպես ժանր ---------- 9

Բացատրական ընթերացնության մեթոդի բաղադրամասերի կիրառումը հեքիաթի ուսումնասիրման գործընթացում ----------

14

Գլուխ II, Հեքիաթի ուսումնասիրության գործընթացում արդյունավետ մեթոդների կիրառմանն ուղղված փորձարարական աշխատանք ----------

18

Հետազոտության նպատակը և մեթոդների ընտրությունը

Հավելված ---------- 20

Եզրակացություն ---------- 23

Առաջարկություններ ---------- 24

Օգտագործված գրականության ցանկ ---------- 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմաի արդիականությունը՝ Մեր օրերում թեման արդիական է և շատ քննարկվող: Հեքիաթներով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների մասին, մեր կյանքում գործող օրենքների մասին: Հեքիաթների շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը: Հեքիաթների շնորհիվ երեխաները սովորում են, որ աշխարհում կան դժվարություններ, չարություն, բայց այդ ամենի կողքին՝ նաև ուրախություն, բարություն, և ամենակարևորը՝ բարու հաղթանակ: Լսելով հեքիաթը՝ երեխան փորձում է իրեն նույնացնել համարձակ, բարի, խելացի հերոսի հետ: Հեքիաթը երեխայի համար դաստիարակչական և ճանաչողական մեծ արժեք ունի: Հեքիաթը ժողովրդական բանահյուսության տեսակներից մեկն է, որը սկզբում եղել է բանավոր, այնուհետև մշակվել է գրավոր և ներկայացվել մարդկությանը: Այն շատ երեխաների սիրելի ժանրն է, և պատահական չէ, որ դպրոցներում ներառված են տարբեր հեքիաթներ:

Հեքիաթը մարդու մոտ մշակում է ներդաշնակության, խաղաղության զգացողություն, ճաշակ, տանում է դեպի բարու հաղթանակը չարի նկատմամբ: Այն, ինչ կյանքում անհնար է եղել տեսնել, մարդիկ ցանկացել են տեսնել հեքիաթներում: Մեզանից յուաքանչյուրի մանկության լավ հուշերը կապված են այն հեքիաթների հետ, որոնք մենք լսել են մեր ծնողներից, մեր ուսուցիչներից, և այսօր մենք դրանք պատմում ենք մեր երեխաներին: Հեքիաթները մանկավարժական և դաստիարակչական մեծ արժեք ունեն՝ կենցաղի, բարոյական սկզբունքների մասին ժողովրդական կայուն պատկերացումներ են կազմում, խոսքի զարմանալի արվեստի տեսողական դպրոց են: Նպաստում են երեխաների երևակայության և գրական ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Հեքիաթների ուսումնասիրությունը նպաստում է գրականության ուսումնասիրության նկատմամբ դպրոցականների հետաքրքրության և մոտիվացիայի բարձրացմանը: Հեքիաթը սեր է սերմանում հողի և ժողովրդի հանդեպ: Հեքիաթներն առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում երեխաների համար: Դրանք հավասարապես գրավիչ են գորոծողությունների արագ և հետաքրքիր զարգացման համար՝ զուգորդված բարի ու չար ուժերի պայքարով, հրաշալի գեղարվեստական պատկերավորության և իդեալականացված հերոսներով, որոնց ցանկանում են նմանվել: Երեխաներին գրավում է այն հանգամանքը, որ լինում է երջանիկ ավարտ: Հեքիաթը օգնում է վերակենդանացնել մեր մշակույթի հոգևոր փորձը և մեր ժողովրդի ավանդույթները, սովորեցնում է բարություն և արդարություն, տրամադրում լավատեսություն:

Հեքիաթը երեխայի առաջին շփումն ու պատկերացումն է իր շրջապատող աշխարհի ու մարդկանց, երևույթների, բնության հանդեպ, հեքիաթներում է նա տեսնում ու լսում չարի ու բարու պայքարի, բարու հաղթանակի մասին, լսում է գեղեցիկի ու տգեղի մասին, սկսում տարբերակել լավն ու վատը, երևակայությունն է զարգացնում: Հենց այստեղ էլ ձևավորվում է երեխան որպես անհատ ու ձևավորվում է նրա արժեհամակարգը:

Աշակերտները ձգտում են կիսվել հեքիաթի վերաբերյալ իրենց տպավորություններով, հաղորդակցվել մեկը մյուսի հետ, հարցեր ուղղել դիմացինին հեքիաթի սյուժեի վերաբերյալ: Այսպիսով զարգանում է կապակցված խոսք, ունենում են հարուստ բառապաշար և կուտակում են գիտելիքների մեծ պաշար:

Հետազոտության նպատակը՝ ուսումնասիրել հեքիաթի ուսուցումը դպրոցում

Հետազոտության խնդիրները՝

1. Տալ ընդհանուր գաղափար հեքիաթի ուսուցման վերաբերյալ
2. Բացահայտել կրթական փաստաթղթերով հեքիաթի ուսումնասիրմանը ներկայացվող պահանջները

3. Հետազոտել հեքիաթի ուսումնասիրման առանձնահատկությունները

ԳԼՈՒԽ Ի.

ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 Գեղարվեստական ստեղծագործությունների տեսակները, կրթական փաստաթղթերով դրանց ուսումնասիրմանը ներկայացվող պահանջները

Մայրենիի դասաժամերին աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, հասկանալ կարդացածը և վերարատադրել, այսինքն պատմել այն, այլև բազում տեղեկություններ են ստանում բնության, պատմության, սովորությունների, մշակույթի մասին, ստանում են բազմաթիվ աշխարաճանաչողական և լեզվական գիտելիքներ, ձևավորվում է նրանց գրական, գեղագիտական ճաշակը և լեզվամտածողությունը, այսինքն՝ արժեհամակարգը:

*Գեղարվեստական ստեղծագործությունները (պատմվածք, բանաստեղծություն, հեքիաթ, առակ) պետք է այնպես ուսուցանել, որ դրանք երեխաներին ոչ միայն մայրենի լեզվով կարդալ և պատմել սովորեցնեն, այլև մշակեն ընթերցած ստեղծագործությունները հասկանալու, հերոսների գործողությունները վերլուծելու, լավը վատից, չարը բարուց, վեհը ստորից տարբերելու, դրանց մասին դատողություններ անելու, պարզ վերլուծություններ անելու կարողություններ: Սրանց հետ ուսումնասիրվում են նաև ժողովրդական մանրապատում ստեղծագործություններ՝ առածներ, ասացվածքներ, հանելուկներ, շուտասելուկներ, սուտասելուկներ: Կրթական փաստաթղթերով դրանց ուսումնասիրմանը ներկայացվող պահանջները՝

- Մայրենիի դասընթացը աշակերտին հնարավորություն կտա ստանալու անհրաժեշտ գիտելիքներ գեղարվեստական գրականության, այդ թվում՝ բանահյուսության, արձակ ու չափածո տարբեր ժանրերի մասին (հեքիաթ, հանելուկ, առակ, բանաստեղծություն, պատմվածք, վիպակ և այլն):
- Գեղարվեստական պատկերավորության մասին պատկերացումների

————————

* Տե՛ս Հանրակրթական դպրոցի 5-6-րդ դասարանների մայրենիի ծրագիր, էջ 22, 23

ձևավորում, առարկաների կամ երևույթների նկարագրության հարցում,

պատկերավորությունն ընկալելու կարողությունների ձևավորում:

- Ստեղծագործական դեպքերի զարգացման ընթացքը կանխատեսելու և ստեղծագործաբար վերափոխելու կարողությունների զարգացում:

- Հորինել հեքիաթներ, հանելուկներ, հորինել հայտնի հեքիաթների ավարտի սեփական տարբերակներ:

- Կառուցվածքով և գաղափարական բովանդակությամբ ավելի բարդ հեքիաթներ, պատմվածքներ, առակներ, լեգենդներ, դրանց առանձնահատկությունը, չափածո ստեղծագործություններ (տողերի, հանգի դիտարկում), ժողովրդական և հեղինակային հեքիաթներ:

- Հեքիաթի առանձնահատկություններ (կրկնություններ, ինքնատիպ ավարտ, կախարդանքով կերպարանափոխություն):

- Իրապատում և հրաշապատում հեքիաթները գործնականում տարբերակելու կարողության զարգացում:

- Կատարելագործել գեղարվեստական տեքստում բառի պատկերավորությունը և արտահայտչականությունը, բանաստեղծական խոսքի երաժշտականությունը զգալու կարողությունները:

- *Հեքիաթների առանձնահատկությունները (բարու հաղթանակը չարի հանդեպ, իրական և անիրական դեպքեր, հերոսներ) ճանաչելու կարողությունների ձևավորում:

- Տարբերել ժողովրդական ստեղծագործությունները հեղինակային գործերից, կազմել հեքիաթի բովանդակային կառուցվածքի գծակարգ և դրան համապատասխան որոշել դասանյութի մասերը, ընտրել և գրառել ուսումնասիրվող թեմային համապատասխան հանելուկներ և պատասխանները ներկայացնել նկարով: Կազմել նկարագրական բնույթի հոսք և այն ավարտել դատողական բնույթի նախադասությամբ,

————————

* Տե՛ս Հանրակրթական հիմնական դպրոցի հայոց լեզու և գրականության առարկայական չափորոշիչ, Եր. 2011, էջ 20, 21

կարդացած ստեղծագործությունների սեղմագրի կազմում, հերոսի կամ

բնության նկարագրության գրառում, հեքիաթների հորինում, ստեղծագործության հերոսների նկատմամբ վերաբերմունքի արտահայտում գույների միջոցով, ընթերցանության թեմաներով նկարչություն, ապլիկացիա, կապակցված խոսք կառուցելու, պատմություններ հորինելու կարողությունների զարգացում, տրամաբանական, ստեղծագործական կարողությունների մշակում, տարբեր առարկաներից ստացած անհրաժեշտ գիտելիքները նոր համատեքստում ճիշտ և տեղին կիառելու կարողությունների ու հմտությունների ձևավորում:

- Տեքստից առանձնացնել հերոսներին բնութագրող դեպքերը, բնությունը նկարագրող բառերն ու արտահայտությունները: Որոշել հեքիաթի գործող անձանց խոսքի առանձնահատկությունները, հակադրել տարբեր անձնաց արարքները, նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: Որոշել հերոսների արարքների դրդապատճառները և վերաբերմունք դրսևորել դրանց նկատմամբ կամ գնահատել:

- Կողմնորոշվել տեքստի բովանդակության մեջ և կարողանալ պատասխանել դասագրքում զետեղված հարցերին:

- Նկարագրել ստեղծագործության հերոսին, հետաքրքիր իրավիճակները, բնությունը:

- Տեքստի բովանդակությունը վերարտադրել դատողական տարրերով՝ երկխոսությունները փոխարինելով պատմողական նախադասություններով:

- Իր կարծիքը, գաղափարները հաստատելու համար վկայություններ, փաստարկներ օգտագործել՝ դրսևորելով խոսքի նկարագրական ոճը: Նախապատրաստվելուց հետո կարդացածի վերաբերյալ հանդես գալ երկխոսությամբ՝ վերարտադրելով ստեղծագործության հերոսի

բնավորության առանձնահատկությունները:

- Հիմնական /5-6-րդ դասարաններ/ դպրոցն ավարտողը պետք է իմանա հայ և արտասահմանյան մանկագիրների ստեղծագործություններից, իմանա արձակ և չափածո ստեղծագործությունների տարբերությունը, հեքիաթի առանձնահատկությունները, տեքստի կառուցվածքը, պարբերությունը, տեքստի տեսակները՝ պատմողական, նկարագրական, հասկանա տեքստի բովանդակության, նկարազարդման և սեփական կենսափորձի միջև կապերը, հասկանա տեքստում նկարագրված իրադարձությունների հաջորդականությունը, վերաբերմունք դրսևորի գործող անձանց արարքների նկատմամբ, հասկանա նրանց զգայական ապրումները, գնահատի գործող անձանց վարքագծի դրդապատճառները:

- Հիմնական դպրոցում մայրենի լեզվի դասավանդումը սովորողների մեջ պետք է ձևավորի սեփական անձի գնահատում և վստահություն իր ուժերին, իր ազգային պատկանելիության, մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության գիտակցում, հարգանք, դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն, ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ, ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում:

Հեքիաթը որպես գրական ժանր

Հեքիաթը երեխայի համար դաստիարակչական և ճանաչողական մեծ արժեք ունի: Հեքիաթներն առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում երեխաների համար: Գրավիչ է հատկապես հեքիաթի սյյուժեն՝ զուգորդված բարի ու չար ուժերի պայքարով, հրաշալի գեղարվեստական հորինվածքով և իդեալականացված հերոսներով, որոնց ցանկանում են նմանվել: Ինչպես միշտ, բոլոր հեքիաթների վերջում լինում է երջանիկ ավարտ: Այդ պատճառով շատ երեխաների սիելի ժանրն է,և պատահական չէ, որ մինչև VI դասարանի ուսումնական ծրագրում ներառված են տարբեր հեքիաթներ:

Բոլոր երեխաները սիրում են հեքիաթներ լսել և կարդալ: Ռուս մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին այնքան բարձր կարծիք ուներ հեքիաթների մասին, որ դրանք ներառեց իր մանկավարժական համակարգում՝ հավատալով, որ ժողովրդական արվեստի պարզությունն ու անմիջականությունը համապատասխանում են

մանկական հոգեբանության նույն հատկություններին:

Հեքիաթը տալիս է փորձառություններ, ստեղծում յուրահատուկ, անզուգական տրամադրություն, առաջացնում լավ ու լուրջ զգացումներ: Հեքիաթները հիմնված են գեղարվեստական ֆանտազիայի, կախարդանքի վրա:

Նրանց մեջ գործում են անիրական հերոսներ, կախարդական առարկաներ, տեղի են ունենում հրաշքներ, կերպարանափոխություններ: Հեքիաթը միշտ ավարտվում է չարի նկատմամբ բարու հաղթանակով:

Հեքիաթը օգնում է վերակենդանացնել մեր մշակույթի հոգևոր փորձը և մեր ժողովրդի ավանդույթները, սովորեցնում է բարություն և արդարություն: *Երեխաների մեծամասնության համար հեքիաթի հետ ծանոթությունը սկսվում է վաղ մանկությունից, երբ նրանք դեռ չգիտեն ինչպես խոսել, այլ միայն բլբլում են: Տատիկներն ու մայրերը նրանց համար կարդում են մանկական հեքիաթներ: Ինչպես կյանքում, այնպես էլ հեքիաթների մեջ, մարդկային լավագույն ձգտումների ու երազանքների իրականացումը կատարվում է երկարատև ու համառ պայքարի միջոցով: Հեքիաթների կենտրոնական դեմքը, նրանց հիմնական հերոսը ժողովրդի մարդն է՝ իր ուրույն հոգեբանությամբ ու բնավորությամբ, իր պայքարով, իր կամքով, իր հաղթանակներով և պարտություններով:

Մեծ է հեքիաթների, ինչպես նաև դաստիարակչական, այնպես էլ պատմաճանաչողական և գրական-գեղարվեստական արժեքն ու նշանակությունը: Հեքիաթների միջոցով ժողովուրդը դրսևորել է այն ոգևորումները, որ մղել է ինքը բնության տարերային ուժերի հաղթահարման համար, արտահայտել իր մտորումները, որոնել է իր կրած տառապանքների պատճառները, պայքարի կոչ է արել ամեն տիպի բռնության, ճնշման, անարդարության ու շահագործման դեմ: Մարդիկ դարեր շարունակ ոգևորվել են հեքիաթների հերոսների խիզախության, անվեհերության, խելքի ու հնարամտության հիանալի օրինակներով, դժվարությունները հաղթահարելու մեծ կամքով, չքավորներին ու ընկածներին զորավիգ կանգնելու ազնիվ ձգտումով, արդարությունը պաշտպանելու և ճշմարտությանը հասնելու անձնազոհ պատրաստակամությամբ, ջանադիր աշխատասիրությամբ, հավատարմությամբ և անձնազոհությամբ: Հեքիաթները հարուստ նյութ են տալիս ժողովրդի հոգեբանության, նրա իղձերն ու ակնկալությունները, նրա բուն պատմությունը ուսումնասիրելու համար:

***

Հեքիաթները լինում են երեք տեսակի՝ իրապատում, հրաշապատում և կենդանական: Մայրենիի դասագրքերում հանձնարարելի են կենդանական և իրապատում հեքիաթները:

Կենդանական հեքիաթները էապես տարբերվում են հեքիաթի ժանրի մյուս տեսակներից: Նրանց հերոսները հիմնականում կենդանիներն են: Ժողովուրդը կենդանիներին անձնավորել է, նրանց դրել գործողությունների և հարաբերությունների մեջ՝ պարզ, սակայն դաստիարակչական, բարոյական արժեք ներկայացնող լուծումներ տալով դրանց: Կենդանիների մասին հեքիաթները հիմնականում երգիծական կամ հումորային պատմություններ են: Այս հեքիաթների հերոսներին ունեն այնպիսի հատկանիշներ, որոնք նրանց ընդմիշտ դարձրել են հայտնի անուն՝ աղվեսը խորամանկ է, նապաստակը՝ վախկոտ, արջը պարզամիտ է և այլն: Կենդանիների մասին հեքիաթները այլաբանական ձևով պատմում են մարդկային թերությունների ու առաքինությունների, սոցիալական խնդիրների ու կոնֆլիկտների մասին: Մի կողմից՝ չարություն, նախանձ, ագահություն, մեծամտություն, մյուս կողմից՝ բարություն, անձնազոհություն, վեհանձնություն, ազնվություն, արդարամտություն, հավատարմություն, իմաստություն:

Իրապատում հեքիաթները ունենում են կենցաղային, հերոսական , սոցիալական և այլ բովանդակություն: Հեքիաթների այդ տեսակի համար առավել կարևոր են իրական, գործնականում իրագործելի դեպքերի ընթացքն ու ստացած լուծումները:

Իրապատում հեքիաթներն արտացոլում են ժողովրդի կյանքը, մարդկային վսեմ ձգտումները, հալածվածների և ճնշվածների ճակատագիրը, ծաղրվում են ժողովրդին կեղեքողները, մարդկային զանազան արատներ: Հեքիաթներին բնորոշ են ժողովրդական պատկերավոր արտահայտությունները, չափազանցությունները, իմաստալից խոսքերը: Հեքիաթներում հաճախ են իրար խառնվում իրականն ու երևակայականը: Հեքիաթները հիմնականում արձակ են, Հազվադեպ՝նաև չափածո: Դրանց մեծ մասին բնորոշ է նույն սկզիբը՝ «Լինում է, չի լինում», «Կար, չկար», «Ժուկով ժամանակով», «Չգիտեմ՝ որ երկրում, որ թագավորությունում», ինչպես նաև նույն վերջաբանը՝ «Երկնքից երեք խնձոր է ընկնում...», «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին» և այլն:

Հրաշապատում կամ կախարդական հեքիաթների արմատները կապվում են մարդկանց հնագույն պատկերացումների հետ: Այստեղ կարող են տեղի ունենալ անիրական, երևակայական, ֆանտաստիկ իրադարձություններ, գործողություններ:

Հրաշապատում հեքիաթներում պատկերվում է բարի ուժերը մարմնավորող հերոսների պայքարը չար ուժերի, դևերի, կախարդների, վիուկների, վիշապների դեմ: Դեպքերը տեղի են ունենում ստորերկրյա թագավորությունում, երևակայական աշխարհներում, այլ աշխարհներում, որտեղ անհավատալին դառնում է իրական: Հերոսներին օգնում են ձին, թռչունը, բարի պառավը կամ իմաստուն ծերունին: Բոլոր հեքիաթների մեջ չարի ու բարու պայքար կա, և այդ պայքարը միշտ ավարտվում է բարի ուժերի հաղթանակով:

Աշխարհի ժողովուրդներին հեքիաթների շարքում իրենց տեղն ունեն նաև հայկական ժողովրդական հեքիաթները, որոնք նույնպես վաղնջական ժամանակների ծնունդ են և բանասացների շնորհիվ փոխանցվել են մեզ՝ որպես զարմանալի, անգին ավանդներ: Հայ բանահավաքներն ու բանագետները գրառել և կորստից փրկել են դրանք: Հայկական հեքիաթների հավաքման ու հրատարակման աշխատանքներին մեծապես նպաստել են Գարեգին Սրվանձտյանցը, Սարգիս Հայկունին, Տիգրան Նավասարդյանը, Երվանդ Լալայանը, Սահակ Մովսիսյանը(Բենսե) և ուրիշներ: Հրատարակվել են բազմաթիվ ժողովածուներ, որոնցից հատկապես արժեքավոր է «Հայ ժողովրդական հեքիաթների» բազմահատորյակը (1958-1985): Յուրաքանչյուր տարածաշրջան ունի իր հեքիաթները, որոնք հաճախ նույն հեքիաթների տեղային տարբերակներն են: Ուշագրավ է նաև 1980 թվականին լույս տեսած «Արև Հեքիաթ» ժողովածուն, որտեղ զետեղված են մի շարք հեքիաթներ՝ ասմունքող Սուրեն Քոչարյանի մշակմամբ: 1981 թվականին լույս է տեսել «Հրեղեն ձին» ժողովածուն, որտեղ ընդգրկված են հարյուրավոր հեքիաթներ, խաղիկներ, հանելուկներ, առածներ և ասացվածքներ, իրենց պապիկներից ու տատիկներից, ուրիշ տարեցներից լսելով ու գրառելով՝ դրանք «Պիոներ կանչ» (այժմ՝ «Կանչ») թերթին էին ուղարկել Հայաստանի տարբեր շրջաններից, Այսրկովկասի հայաշատ վայրերից՝ 2-10-րդ դասարանների աշակերտները: Կուտակված նյութն այնքան առատ էր, որ 2003 թվականին լույս է տեսել նույն ժողովածուի երկրորդ գիրքը՝ «Թագավորի երազները» խորագրով (հավաքող՝ Սերգեյ Վարդանյան):

Ե՛վ հայկական ժողովրդական, և՛ աշխարհի ժողովուրդների հեքիաթները մշտապես գրավել են Ղազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Զորյանի, Խնկո Ապոր, Հայրապետ Հայրապետյանի և այլ գրողների ուշադրությունը, որոնք իրենց գրած, մշակած ու փոխադարձ հեքիաթներով հայ գեղարվեստական գրականությունը հարստացրել են նոր, ինքնատիպ ստեղծագործություններով:

Դպրոցական դասագրքերում ներկայացված են բոլոր տեսակի հեքիաթները: Այս ուղղությամբ աշխատանքը բաղկացած է մի քանի փուլից՝ հեքիաթի իմաստալից

վերլուծություն, գլխավոր հերոսների առանձնացում, նրանց բնավորության գծերի որոշում և գնահատված բնութագրերի կազմում, կերպարների տեսակների նույնականացում՝ ըստ հեքիաթում նրանց կատարած դերի և բնութագրերի, նրանց բանավոր դիմանկարի ստեղծում:

*Պատկերների համակարգի հետ աշխատելիս անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել որոշել նրանցից յուրաքանչյուրի դերը հեքիաթի սյուժեում, բնութագրել: Կարևոր է նաև երեխաներին սովորեցնել տեքստում գտնել, անվանել և պատկերացնել կախարդական արարածներ և կախարդական առարկաներ, որոնք միասին կազմում են հեքիաթի հրաշալի աշխարհի հիմքը:

Երեխաների հանդիպումը հեքիաթների հերոսների հետ նրանց անտարբեր չի թողնում: Դժվարության մեջ գտնվող հերոսին օգնելու, հեքիաթային իրավիճակը հասկանալու ցանկությունը խթանում է երեխայի մտավոր գործունեությունը, զարգացնում է հետաքրքրությունը ընթերցանության, դիտարկման, երևակայության, կարեկցանքի, հույզերի և փոխաբերական հիշողության նկատմամբ, հումորի զգացում է ձևավորում:**

1.3 Բացատրական ընթերացնության մեթոդի բաղադրամասերի կիրառումը հեքիաթի ուսումնասիրման գործընթացում

Մայրենի լեզվի դասերը կազմակերպվում են բացատրական ընթերցանության մեթոդով, որը դիդակտիկական բազմաբնույթ ձևերի ու միջոցների, մանկավարժահոգեբանական տեսանկյուններով հիմնավորված մեթոդների համակարգ է:

Հեքիաթի ուսումնասիրման գործընթացում պարբերաբար ունկնդրումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի առաջին ընթերցման ժամանակ աշակերտները ընթերցած նյութի բովանդակության մասին ընդհանուր, մակերեսային պատկերացումներ են կազմում, այդ պատճառով բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրամասերի կիրառումը հեքիաթի ուսումնասիրման գործընթացում շատ կարևոր է:

Հեքիաթի շարունակումը զարգացնում է երեխայի խոսքը, գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը և նպաստում է նրա ինքնակազմակերպմանը, ինքնադրսևորմանն ու ինքնարտահայտմանը:

Հեքիաթը շարունակելով՝ երեխայի մոտ ձևավորվում են հորինելու, նմանակելու հմտություններ, մշակվում է խոսքի կուլտուրան:

Տվյալ պարագայում երեխան ինքն իրեն դնում է հեքիթր հերոսի տերը և կարծես աշխարհին նայում է այն հերոսի տեսանկյունից, որի դերը կատարում է: *

Այսպիսով, երեխաների ստեղծագործական երևակայության զարգացման լավագույն միջոց է՝ կիսատ թողած հեքիաթը շարունակելը: Դրա սկիզբը կարդում է ուսուցիչը և կանգ է առնում հեքիաթի հանգուցային կետում և երեխաներին առաջարկում ինքնուրույն շարունակել այն:

Բացատրական մեթոդի բաղադրամասերից առաջինը զրույցն է, որը բանավոր երկխոսության ձև է: Զրույցի ժամանակ դասարանը կենտրոնանում է հեքիաթի հիմնական ուղղությունների վրա, նոր տեղեկություններ են ձեռք բերում: Զրույցի հիմնական նպատակը երեխաներին հեքիաթի բովանդակությունը, կերպարների գործողություններն ու նրանց հոգեբանությունը ճիշտ հասկանալուն տրամադրելն է, դասարանում համապատասխան տրամադրություն ստեղծելը, հեքիաթի հիմնական իմաստը, գաղափարը հասկանալու համար: Հեքիաթը ուսումնասիրելու ժամանակ զրույցը լինում է հակիրճ և կոնկրետ, յուրաքանչյուր բառը լինում է իմաստավորված:

Ուսուցիչը մատչելի տեղեկություններ է հաղորդում թեմայի մասին կամ հարցերի միջոցով բացահայտում է այն տեղեկությունները, որոնք ունեն աշակերտները, և դրանք դարձնում մյուսների սեփականությունը: Հեքիաթը առաջինը պետք է ընթերցի և մեկնաբանի ուսուցիչը՝ սահուն և արտահայտիչ: Այնուհետև բացատրվում է հեքիաթի բովանդակությունը ու մեկնաբանվում՝ քննարկելով հերոսների վարքը, արդարացնելով կամ քննադատելով նրանց:

Հեքիաթը ուսումնասիրելու ժամանակ կատարում են բառային աշխատանք: Կատարվում է անծանոթ բառերի բացատրություն, ծանոթ արմատներով նոր բառերի կազմում, հեքիաթից հոմանիշ և հականիշ բառերի ընտրությունը: Այս ամենը կարևոր է հեքիաթի ուսուցման համար, քանի որ աշակերտները այս տարբերակով լավ են յուրացնում ուսուցանվող նյութը և հարստացնում են բառապաշարը:

Հեքիաթի ուսուցման ժամանակ կարևոր է նաև հեքիաթը վերարտադրելը կամ պատմելը: Մինչ այս փուլին հասնելը՝ ծանոթանում են հեքիաթի բնագրին, կարդում, ուսումնասիրում, կատարում բառային աշխատանք: Պետք է հարցերով քննարկել տվյալ դասը, ունկնդրելով յուրաքանչյուրի պատասխանը: Հարցերը պետք է

ձևակերպվեն այնպես, որ աշակերտներին ուղորդեն ընդարձակ նախադասություններով խոսք կառուցելու: Ձևակերպված հստակ հարցերի միջոցով աշակերտները յուրացնում են տվյալ թեման:

Հեքիաթի ուսումնասիրման ժամանակ կարդացածը՝ համառոտ պատմելու համար պետք է՝ որոշել թեման (ինչի՞ կամ ո՞ւմ մասին է բնագիրը), մտածել հիմնական մտքի շուրջ, համառոտել բնագիրը, մանրամասները բացառել, կենտրոնանալ գլխավոր մտքի վրա: Հեքիաթը համառոտ պատմելու համար աշակերտները, այսպես ասած, կազմում են բնագրի համառոտ նախագիծ՝ պլան: Աշակերտներին ամենից շատ դուր է գալիս դերերով պատմելը: Այն աշակերտներին սովորեցնում է անկաշկանդ և հստակ խսնքով հաղորդակցվել միմյանց հետ: Աշակերտները դերերով հեքիաթը պատմելու ժամանակ կտրվում են իրականությունից, մտնում հեքիաթի երևակայական և գունագեղ աշխարհը, իրենց պատկերացնում որպես հեքիաթի հերոս և փորձում են ամեն կերպ լավ և արտահայտիչ մարմնավորել կերպարը:

Աշակերտներին կարելի առաջարկել հեքիաթը պատմել որպես մասնակից կամ պատմել որպես ականատես: Իբրև մասնակից նշանակում է, որ թեման պատմվում է առաջին դեմքով, կարծես թե նրանք նույնպես այդ հերոսներից են և մասնակցել են այդ գործողություններին: Իսկ որպես ականատես աշակերտները պատմում են բայի երրորդ դեմքով: Երրորդ դեմքով պատմելու համար աշակերտներին պետք է առաջարկել պատմել այնպես, կարծես իրենք հեռվից դիտելիս են եղել այն դեպքերը, որոնց մասին պատմում են:

Դասարանում ուսումնասիրվող յուրաքանչյուր ստեղծագործություն, թեմա կամ լեզվական նյութ պետք է ամփոփվի: Ամփոփումը կատարվում է տարբեր եղանակներով: Դա կախված է ուսուցչի ընտրությունից՝ հարցերի միջոցով կամ

այլ մեթոդիկաներով: Սակայն ամփոփումը հիմնականում իրականացվում է հարցերի միջոցով, հետևաբար ամփոփիչ զրույցի համար ընտրված հարցերը պետք է ընդհանրացնող-համակարգող լինեն, որպեսզի երեխաներին մղեն պատասխանելիս որոշակի հետևություններ, մտահանգումներ կատարելուն:

Բացատրական ընթերցանության մեթոդի ամփոփումը իրականացնելիս ուսուցիչը պետք է ձգտի, որ այն կատարվի հիմնականում աշակերտների միջոցով:

ԳԼՈՒԽ II.

ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ուսումնասիրության ընտրակազմը և մեթոդների ընտրությունը

Փորձարարական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հեքիաթի ուսուցման ժամանակակից մեթոդներով տարվող աշխատանքի արդյունավետությունը: Հետազոտական աշխատանքի արդյունքները ցույց են տալիս, որ հեքիաթի միջոցով իրոք զարգանում են աշակերտների ստեղծագործական ունակությունները, կապակցված խոսք է ձևավորվում, զարգանում է բառապաշարը:

Մեթոդները նպաստում են աշակերտների մեջ մարդկային բարձրագույն արժեքների ձևավորմանը, Դաստիարակում են նրանց, զարգացնում երևակայությունը, ստեղծագործական կարողությունները:

Հեքիաթներ ուսումնասիրելիս նպատակահարմար ենք գտնում կիրառել հետևյալ մեթոդները:

- Խառնված հերթականության մեթոդ

- Պատումի հեղինակի դիրքորոշմանը հակառակ ընթերցանություն
- Կանխագուշակության աղյուսակ
- Պատումի ուրվագծի աղյուսակ
- Խմբավորում
- Քառաբաժան և այլն

Խառնված հերթականության մեթոդը սովորաբար կիրառվում է իմաստի ընկալման փուլում: Այն նպաստում է տեքստի հատվածների միջև տրամաբանական կապը գտնելու հմտության զարգացմանը, աշակերտների կողմից տեքստի ընկալմանը և ճիշտ վերարտադրմանը: Ուսուցիչը 5-6 իրադարձություն գրառում է առանձին թղթերի վրա: Աշակերտներին մեկական թերթիկ է տալիս: Նրանք թերթիկները ձեռքերին բռնած, խառնված հերթականությամբ կանգնում են: Ուսուցիչը աշակերտներին առաջարկում է որոշել ճիշտ հերթականությունը: Խմբերը ներկայացնում են դասավորության իրենց տարբերակը: Երբ դասարանն ընդհանուր հայտարարի է գալիս, ուսուցիչն առաջարկում է կրկին կարդալ տեքստը և տեսնել՝ արյոք իրենց որոշված դասավորությունը համապատասխանում է բնագրի դասավորությանը:

Կանխագուշակության աղյուսակ մեթոդը նպաստում է նյութի ընկալմանը, սովորողների երևակայության, մտածողության զարգացմանը, առանձին փաստերի վրա ենթադրություններ անելու հմտության զարգացմանը:

Դասի պլան

Թեման՝ Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք (հայկական ժողովրդական հեքիաթ)

Նպատակը՝

ա) Գիտելիքներ

Աշակերտը պետք իմանա՝

- Պառկել, արգելել, դարձյալ, հաղթել, միանգամից բառերի ուղղագրությունը.
- Նոր բառեր և իմաստներ(ճարահատյալ, գարշահոտ, վայել, արգելել, մանավանդ).
- Ձնջել բազմիմաստ բառի իմաստները.
- Կայուն բառակապակցություններ(ոտնատակ տալ, արգելք դնել, խելք խելքի տալ, գործի կպչել).
- Պալատ, բույն, խրճիթ, հոր բառերի հոմանիշները.
- Հականիշ բառեր.
- Էս, էստեղ, էնտեղ, էնքան ժողովրդական բառերի գրական համարժեքները.
- Առակներ, իմաստախոսություն

բ) Կարողություններ և հմտություններ

Աշակերտը պետք է կարողանա՝

- Սահուն, արտահայտիչ և հասկանալով կարդալ հեքիաթը.

- Գնահատել փղի արարքները.
- Կարծիք հայտնել մրցյունների որոշման մասին.
- Գնահատել թագավորի վերաբերմունքը հեքիաթի սկզբում և վերջում.
- Գնահատել հեքիաթում ամփոփված հիմնական միտքը.
- Բացահայտել առակների և իմաստախոսության միտքը.
- Ճանաչել և կազմել բայի 3 ժամանակների ձևերը.
- Կազմել տրված գոյականի հոգնակի թվով ձևը.

գ) Արժեքային համակարգ

Աշակերտը պետք է իմանա՝

- Արժևորի համախմբվածությունն ու միասնությունը.
- Վերաբերմունք արտահայտի անպատժելիության նկատմամբ.
- Կարևորի ուրիշին հարգելու հատկանիշը.
- Գնահատաի արդարամտությունը.

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Նախապատրաստական զրույց հեքիաթի վերնագրի շուրջ(գյուղ կանգնի, գերան կկոտրի, միասնություն ուժ է):

Իմաստի ընկալման փուլ

Հեքիաթի ընթերցում:

Բնագրային աշխատանք:

ա) Բառային աշխատանք

բ) Տեքստային աշխատանք

- Հեքիաթի գործողությունների ճիշտ հաջորդականության որոշում(խառնված հերթականություն մեթոդի կիրառմամբ).
- Առածների և իմաստախոսության ընթերցում և մեկնաբանում.

Կշռադատման փուլ

Աշակերտները պետք է՝

- Գնահատական տան փղի արարքներին.

- Կարծիք հայտնեն մրջյունների որոշման մասին.
- Փորձեն հեքիաթը ներկայացնել պատումի հեղինակի դիրքորոշմանը. հակառակ՝ պատասխանելով հետևյալ հարցադրումներին.

1. Ի՞նչ կլիներ, եթե փիղը թագավորի սիրելին չլիներ
2. Ի՞նչ կլիներ, եթե մրջյունները լինեին թագավորի սիրելին

- Գնահատեն թագավորի վերաբերմունքը մրջյունների նկատմամբ հեքիաթի սկզբում և վերջում.
- Բացահայտեն հեքիաթի հիմնական ասելիքը(վերնագիրը). հնարավոր է քննարկման ծավալում.
- Զրույց ծավալեն թեմային առնչվող նոր սովորած և արդեն իմացած առածների շուրջ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

- Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, միաժամանակ ստեղծագործական ունակությունների, բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:
- Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի

էմոցիոնալ և պատկերավոր:

- Ձևավորվում է հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն:
- Հեքիաթը երեխայի առաջին շփումն ու պատկերացումն է իր շրջապատող աշխարհի ու մարդկանց, երևույթների, բնության հանդեպ, հեքիաթներում է նա տեսնում ու լսում է չարի ու բարու, պայքարի, բարու հաղթանակի մասին, լսում է գեղեցիկի ու տգեղի մասին, սկսում տարբերակել լավն ու վատը: Ու հենց այստեղ էլ ձևավորվում է երեխան որպես անհատ ու ձևավորվում է նրա արժեհամակարգը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հեքիաթ կարդալուն նախապատրաստվելիս կարևոր է երեխաների համար

տեսողական և գործնական գործողություններ կազմակերպելը կամ զրույց վարելը, որն ապահովում է աշակերտների կողմից հեքիաթի իրադարձությունների և խնդիրների համարժեք ընկալումը:

2. Շատ ցանկալի է, որ ուսուցիչը օգտագործի իր սեփական ընթերցանությունը,

տեքստի այնպիսի մատուցմամբ , որի ընթացքում պահպանվում է ինտոնացիան՝ երեխաների համար մոտ և հասկանալի խոսակցական խոսքի ինտոնացիան, որն ուղեկցվում է նաև համապատասխան դեմքի արտահայտություններով, ժեստերով:

3. Հեքիաթը վերլուծելիս չպետք է երեխաների ուշադրությունը կենտրոնացնել

գեղարվեստական գրականության, այլաբանության վրա, այլապես կվերանա հեքիաթի հմայքը և կվերանան այն հատկությունները, որոնք հեքիաթը դարձնում են հեքիաթ:

4. Տեքստը վերլուծելիս տեղին են խնդրահարույց բնույթի հարցերը, որոնք

երեխաներին ստիպում են մտածել հերոսների գործողությունների մասին՝ օգնելով աշակերտներին որոշել իրենց վերաբերմունքը հեքիաթի հերոսների և նրանց գործողությունների նկատմամբ:

5. Կարևոր է երեխաներին ցույց տալ, թե ինչից է բաղկացած հեքիաթը, ինչպես

է այն «ստեղծվում», պատկերացումներ տալ հերոսների, իրադարձությունների համակարգի և նրանց մեջ հեքիաթի հերոսների դերի մասին:

6. Կարևորում ենք նաև այն, որ հեքիաթները պետք է նոր մեթոդներով ամփոփել

կամ ընթացքը անցկացնել մեթոդներով, քանի որ այդ ժամանակ աշակերտները ակտիվանում են, հետաքրքրվածությամբ սպասում ընթացքին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարտիրոսյան Ն. հեքիաթի ուսուցման միջոցով սովորողների բարոյական որակների ձևավորում, Նախաշավիղ 3-4 2005, էջ 24

2. Иванова. – М. Литературныые сказки для детей/ Просвещение, 1993. – 63с.

3. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս հրատ.», Եր., 1980

4. Հանրակրթական դպրոցի 4-6 դասարանների մայրենիի ծրագիր, 53 էջ

5. Հանրակրթական հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշիչ, Եր. 2011, 40էջ

6. https://nsportal.ru/detskiy-sad/raznoe/2017/10/08/obuchenie-skazkoy- Мутовина Т. Н., Обучение сказкой

7. Ջրբաշյան, Մախչանյան, Գրականագիտական բառարան, «Լույս», 1980թ.

8. Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեյան, Մայրենի 4; Մեթոդական ուղեցույց